Ուրվագիր յոթերորդ

Ճանաչել Եհովային՝ հավիտենական Աստծուն, Նրա սիրո հոգածության, կարեկցանքների և հավատարմության մեջ

Գրվածքների ընթերցում. Երմ 2:19, 10:10ա, 11:20, 20:12, Ողբ 3:22-25, 5:19

I. Երեմիան հաճախ էր դիմում Աստծուն՝ որպես զորքերի Եհովային՝ Երմ 2:19, 5:14, 6:9, 7:21, 9:7, 15, 17, 11:17, 20:12.

Ա. «Եհովան ճշմարիտ Աստված է. Նա կենդանի Աստված է և հավիտենական Թագավոր»՝ 10:10ա.

1. «Եհովա» անունը նշանակում է «Ես եմ, որ եմ», ինչը ցույց է տալիս, որ Եհովան Հավիտենականն է՝ Նա, ով էր անցյալում, ով է ներկայում և ով հավիտյան լինելու է ապագայում՝ Ելց 3:14, Հյտ 1:4.
   ա. Եհովան ինքնագո և հավիտենագո Աստված է. Նա գոյություն ունի հավիտյան և չունի ո՛չ սկիզբ, ո՛չ վերջ՝ Ելց 3:14:
   բ. «Ես եմ» տիտղոսը մատնանշում է Նրան, ում գոյությունը Իրենից զատ ուրիշ այլ բանից կախված չէ՝ Հվի 8:24, 28, 58:
2. Եհովան Միակն է, ով է, և մենք պետք է հավատանք, որ Նա է՝ Եբր 11:6:
3. Որպես «Ես եմ»-ը՝ Եհովան Համաբովանդակն է. Նա բոլոր դրական բաների և այն ամենի իրականությունն է, ինչի կարիքը Նրա մարդիկ ունեն՝ Հվի 6:35, 8:12, 10:14, 11:25, 14:6:
4. Եհովայից զատ՝ մնացած ամեն բան ոչինչ է. Նա միակն է, ով է, Միակն է, ով ունի լինելու իրականությունը՝ Եբր 11:6:

Բ. «Ո՛վ զորքերի Եհովա, որ արդարաբար ես դատում, որ քննում ես ներքին մասերն ու սիրտը»՝ Երմ 11:20.

1. «Զորքերի Եհովա» տիտղոսը ցույց է տալիս, որ Եհովա Աստված Հզորն է, երկնային ամբողջ զորքի Տերն է, ամբողջ զորքի Հրամանատարը՝ 20:12, 30:8, 48:1, 50:18, Գ Թգ 22:19:
2. Զորքերի Եհովան փառքի Թագավորն է՝ Նա, ով ուժեղ է և հզոր. Նա բանակների Եհովան է՝ Սղմ 24:8, 10:
3. Փառքի Թագավորը՝ զորքերի Եհովան, ավարտունացած Եռամեկ Աստված է, ով մարմնավորված է հաղթական և եկող Քրիստոսի մեջ:
4. Որպես մարմնացած, խաչված և հարուցանված Քրիստոսը՝ փառքի Թագավորը գալիս է՝ տիրելու երկրին և վերց- նելու այն որպես Իր թագավորությունը.
   ա. Զորքերի Եհովան պատերազմները դադարեցնում է մինչև երկրի ծայրը. Նա բարձրացվելու է ազգերի միջավայրում, և Նա բարձրացվելու է երկրի վրա՝ 46:9-10:
   բ. Զորքերի Եհովան բոլոր ազգերին կառավարելու իշխանություն ունի, և Նրա ձեռքում է թագավորներ հեռացնելու և թագավորներ կարգելու իշխանությունը՝ Դնլ 2:21:
5. Այն ժամանակ, երբ քահանայությունը անկում էր ապրել, Աստված Իր անունը բացահայտեց որպես «զորքերի Եհովա»՝ ցույց տալով, որ երբ Իր ղեկավարումն այդպիսի անկման վիճակում էր, Նա դուրս էր գալու

և կառավարելու էր ողջ իրավիճակը, որպեսզի բերեր Իր թագավորության թագավորումը՝ Ա Թգ 1:3:

II. «Դո՛ւ, ով Եհովա, հարակայում ես հավիտյան, Քո գահը սերնդեսերունդ է»՝ Ողբ 5:19.

Ա. 19-րդ խոսքում Երեմիան, փոխելով իր մոտեցումն ու տեսանկյունը իրենից դեպի Աստված, խոսում է Աստծու հավիտենական գոյության ու անփոփոխ կառավարության մասին:

Բ. Երուսաղեմը տապալված էր, տաճարը այրված էր, իսկ Աստծու ժողովուրդը՝ գերեվարված, բայց Եհովան՝ տիեզերքի Տերը, մնում է և շարունակում է գործադրել Իր տնօրինումը:

Գ. «Դո՛ւ, ով Եհովա, հարակայում ես հավիտյան» արտահայտությունը ցույց է տալիս, որ Աստված հավիտենական է, և որ Նրա մեջ փոփոխություն չկա՝ խ. 19.

1. Աստված մնում է անփոփոխ, Նա ենթակա չէ պայմանների և հանգամանքների հետևանքով առաջացած որևէ փոփոխության՝ Սղմ 90:2, Հռմ 16:25 26:
2. Մարդկային ոլորտում տարատեսակ փոփոխություններ են տեղի ունենում, բայց Աստծու հավիտենական գոյությունն անփոփոխ է. Նա մշտապես նույնն է մնում:
3. Աբրահամը «կանչեց Եհովայի՝ Հավիտենական Աստծու անունը»՝ Ծնդ 21:33.
   ա. Եբրայերենում «Հավիտենական Աստված»-ը «Էլ- Օլա՛մ»-ն է. «Էլ» բառը նշանակում է «Հզոր», իսկ «Օլամ»-ը՝ «հավիտենական» կամ «հավիտենություն» և ծագում է եբրայերեն արմատից, որը «ծածկել» կամ «թաքցնել» է նշանակում:
   բ. «Էլ-Օլամ» աստվածային տիտղոսը հավիտենական կյանք է ենթադրում՝ հմմտ Հվի 1:1, 4:
   գ. Եհովային՝ Հավիտենական Հզորին կանչելով՝ Աբրահամը փորձառաբար ապրում էր Աստծուն՝ որպես մշտապես կենդանի, ծածուկ, խորհրդավոր Մեկին, ով հավիտենական կյանքն է:

Դ. «Քո գահը սերնդեսերունդ է» արտահայտությունը վերաբերում է Աստծու հավիտենական և անփոփոխ կառավարությանը՝ Ողբ 5:19, Սղմ 45:6, 93:2, Հյտ 4:2-3.

1. Աստծու գահը ո՛չ սկիզբ ունի, ո՛չ վերջ. Նրա գահը գոյություն ունի սերնդեսերունդ:
2. Ողբերի վերջում Երեմիայի գրառումն Աստծու հավիտենական գոյության և անփոփոխ կառավարության մասին, անշուշտ, աստվածային է.
   ա. Երեմիայի խոսքն Աստծու հավիտենական գոյության և Նրա գահի մասին համոզիչ նշան է, որ Ողբերը գրելիս Երեմիան դիպել էր Աստծու տնտեսությանը:
   բ. Նա դուրս էր եկել իր մարդկային զգացմունքների ոլորտից, դիպել Աստծու անձին և Աստծու գահին և մտել էր Աստծու աստվածայնության մեջ:

Ե. Նոր Երուսաղեմում Աստված լիովին բացահայտվելու է Իր անձի մեջ որպես հավտենական Թագավոր և Իր կառավարության՝ որպես Իր

հավիտենական, անսասան թագավորության մեջ. երկուսն էլ Իր մարդկանց վրա Նրա աշխատանքի անսասան հիմքն են՝ Եբր 12:28, Հյտ 22:3:

III. «Եհովայի սիրո հոգածությունն է, որ մենք չսպառվեցինք, որովհետև Նրա կարեկցանքները չեն պակասում. դրանք նոր են ամեն առավոտ. մեծ է Քո հավատարմությունը»՝ Ողբ 3:22-23.

Ա. Եհովան հայտնվեց Երեմիային՝ ասելով. «Ես սիրո հոգածությամբ ձգել եմ քեզ»՝ Երմ 31:3.

1. Եհովայի սիրո հոգածությունը թանկագին է, հարատև, երկինքներից ավելի վեր, և այն առաջնորդում է դեպի Քրիստոսը՝ որպես Աստծու կառույցի անկյունաքարը՝ Սղմ 36:7, 9-10, 108:4, 118:1-4, 22-29, 136:1, 26:
2. Սաղմոս 103-ը խոսում է Աստծու պատմության մասին Նրա սիրո հոգածության ու կարեկցանքների մեջ այն բանում, թե Նա ինչպես է ներում Իր մարդկանց մեղքերը, բուժում, փրկագնում նրանց և հոգում նրանց համար:
3. Սաղմոսերգուն ասաց Եհովային. «Քո սիրո հոգածության առատության մեջ կմտնեմ Քո տունը»՝ 5:7.
   ա. Ցանկացած ոք, ով Սիոն լեռան վրա տաճարը մտնելու արտոնություն ուներ, պետք է լիներ Աստծու սիրո հոգածության ներքո:
   բ. Իրականում ինքնին տաճար մտնելը Աստծու սիրո հոգածության առատության վայելք էր:
   գ. Եհովայի տաճարում Նրա սիրո հոգածության մասին խորհրդածելը ցույց է տալիս, որ մենք դիպչում ենք Նրա սիրո հոգածությանը եկեղեցում:
4. Սաղմոս 101-ը բացահայտում է, որ Քրիստոսը թագավորելու է երկրի վրա սիրո հոգածությամբ և արդարացիությամբ:

Բ. Իսրայելի ժողովուրդը ձախողվել էր, բայց Աստծու կարեկցանքները պահպանեցին Իսրայելի մնացորդը՝ Իր տնտեսությունն իրագործելու համար՝ Ողբ 3:22-23.

1. Կարեկցանքն ավելի խոր, նուրբ ու հարուստ է, քան ողորմությունը՝ Հռմ 9:15, Սղմ 103:8:
2. Կարեկցանքը վերաբերում է Աստծու ներքին գորովին, որը սկիզբ է առնում Նրա սիրող էությունից՝ Բ Կրթ 1:3, Հկբ 5:11, Ղկս 6:36:
3. Քրիստոսը երկիր եկավ Աստծու ողորմած կարեկցանքների շնորհիվ՝ 1:78:
4. Եհովայի կարեկցանքները «նոր են ամեն առավոտ»՝ Ողբ 3:23.
   ա. 23ա խոսքը ցույց է տալիս, որ Երեմիան ամեն առավոտ դիպչում էր Տիրոջը՝ որպես Կարեկցողին:
   բ. Տիրոջ հետ հենց այս շփման միջոցով նա խոսք ստացավ Աստծու սիրո հոգածության, կարեկցանքների և հավատարմության մասին:

Գ. Երեմիան ասաց Եհովային. «Մեծ է Քո հավատարմությունը»՝ խ. 23բ.

1. Աստծու կարեկցանքները չեն պակասում, որովհետև Նա Հավատարիմն է՝ Սղմ 57:10:
2. Աստված հավատարիմ է Իր սեփական խոսքին. Նա չի կարող դրժել Ինքն Իրեն. Նա չի կարող դրժել Իր բնությունը և Իր էությունը՝ Բ Տմթ 2:13:

3. Իր հավատարմությամբ Աստված մեզ կանչել է Իր Որդու հետ հաղորդակցության մեջ լինելու, և Նա մեզ պահելու է այդ մասնակցության և վայելքի մեջ Իր հավատարմությամբ՝ Ա Կրթ 1:9:
4. Հավատարիմ Աստված, ով մեզ կանչել է, նաև լիովին սրբացնելու է մեզ և մեր ամբողջ էությունը պահպանելու է ամբողջական՝ Ա Թսղ 5:23-24:

IV. «Եհովան իմ բաժինն է», - ասում է իմ շունչը, ուստի Նրա վրա է հույսն իմ՝ Ողբ 3:24.

Ա. Երեմիայի այն խոսքը, որ Եհովան մեր բաժինն է և որ մեր հույսը Նրա վրա է, նորկտակարանյան համ ունի՝ Կղս 1:12, 27.
1. Երեմիան վայելում էր Եհովային՝ որպես իր բաժնի և իր հույսը դնում էր ոչ թե իր կամ որևէ այլ բանի վրա, այլ միայն Եհովայի՝ Ողբ 3:24.
   ա. Մի կողմից՝ Երեմիան գիտակցում էր, որ Աստված սիրո հոգածության Աստված է, որ Նա կարեկցող է և որ Նրա խոսքը հավատարիմ է:
   բ. Մյուս կողմից՝ Երեմիան գիտակցում էր, որ մենք, միևնույն է, պետք է ամեն առավոտ դիպչենք Տիրոջը, մեր ամբողջ հույսը Նրա վրա դնենք, սպասենք Նրան և կանչենք Նրա անունը՝ խխ. 23 25, 55:
2. Երբ սաղմոսերգուն Աստծու սրբարանը մտավ և իր իրավիճակի վերաբերյալ աստվածային տեսակետն ու ըմբռնումը ստացավ, կարողացավ ասել, որ Աստված իր բաժինն է հավիտյան՝ Սղմ 73:17, 26.
   ա. Աստծու սրբարանում սաղմոսերգուն հրահանգ ստացավ, որ որպես իր բաժին ընդունի միայն Աստծուն և Աստծուց զատ ուրիշ ոչինչ չընդունի՝ խ. 26:
   բ. Աստծու մտադրությունը Իրեն փնտրողների առնչությամբ այն է, որ նրանք ամեն ինչը Նրա մեջ գտնեն և չշեղվեն Նրան բացարձակ կերպով վայելելուց:

Բ. «Եհովան բարի է Իրեն սպասողների համար, Իրեն փնտրող շնչի համար»՝ Ողբ 3:25.
1. Թեև Աստված ճշմարիտ, կենդանի, կարեկցող և հավատարիմ է, Նա հաճախ հետաձգում է Իր խոսքը կատարելը, որպեսզի ստուգի Իր մարդկանց՝ Սղմ 27:14, 130:6, Եսյ 8:17, 30:18, 64:4:
2. Հավիտենական Աստծուն սպասել նշանակում է մեզ վերջ դնել, այսինքն՝ կանգնեցնել մեզ մեր ապրելակերպում, մեր վարվելակերպում ու մեր գործունեության մեջ ու ստանալ Աստծուն Քրիստոսի մեջ՝ որպես մեր կյանքի, մեր անձի և մեր փոխարինման՝ 40:28, 31.
   ա. Մենք պետք է յուրացնենք Տիրոջը սպասելու դասը՝ 30:18:
   բ. Այսօր վերջնական ավարտունության ժամանակը չէ, ուստի մենք պետք է սպասենք Տիրոջը՝ 64:4:
3. Երբ սպասում ենք Տիրոջը, մենք պետք է փնտրենք Նրան ու կանչենք Նրան.
   ա. «Ինձ կփնտրեք և կգտնեք, եթե ձեր ամբողջ սրտով որոնեք Ինձ»՝ Երմ 29:13:
   բ. «Կանչիր Ինձ, և Ես կպատասխանեմ քեզ և մեծ ու թաքցված բաներ կհայտնեմ քեզ, որ դու չգիտես»՝ 33:3:

© 2020 Living Stream Ministry